ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 023724855 metsamormeria@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ կետի 3-րդ պարբերությամբ և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N13 -Ն հրամանի 82-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 2 արձանագրությունը՝ հանձնաժողովի անհրաժեշտ քվորումի վերաբերյալ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոն (ծածկագիր3.2-12) զբաղեցնող համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը համարել չկայացած՝ հանձնաժողովի իրավազոր չլինելու պատճառով:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում առկա նհամայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի սեպտեմբերի 26-ին անցկացնել կրկնակի մրցույթ՝ համաձայն հավելվածի:

3. Մրցույթի անցկացման տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Ն. Թադևոսյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 20
ք.Մեծամոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի
սեպտեմբերի 20-ի N 1657 որոշման

ԿԱՋՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի սեպտեմբերի 26-ին անցկացվող մրցույթի

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի անփնագրի ծածկագիրը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 1-ին կարգի մասնագետ	3.2-12	Մրցույթի անցկացման ժամը

Աշխատակազմի քարտուղար՝ Մարատ Հովհաննիսյան